ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

«15» փետրվարի 2023թ. № 034/27- 652

ԱՁ Մինասիկ Ոսկանյան
/հասցե՝ Լոռու մարզ, գ.Սարահարթ. 1-ին փ,տուն 14/

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սպիտակի համայնքապետարանի և ԱՁ Մինասիկ Ոսկանյանի միջև 2023 թվականի հունվարի 23-ին կնքված թիվ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-23/1-2 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Սպիտակ համայնքի կարիքների համար աղբի հավաքման և փոխադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն) թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագիրը կնքվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ: Այն է՝ հրավերի մեջ հայտերի ներկայացման վերջնաժամկետի օրը սահմանելիս 7-15 օրը չի պահպանվել: ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526 որոշմամբ հաստատված կարգի 80-րդ կետը համաձայն.«հայտերը ներկայացնելու համար նախատեսված ժամկետը պետք է պակաս չլինի 7 և ավելի քան 15 օրացույցային օրվանից, որը հաշվարկվում է տեղեկագրում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման օրից»:

Վերոգրյալից ելնելով, հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը, Սպիտակի համայնքապետարանը ծանուցում է ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-23/1-2 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին:

Միաժամանակ հայտնում ենք այն մասին, որ պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ

սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Կատ. Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման,գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի առաջին կարգի մասնագետ՝ Ա.Բաբայան